

# ՏԻԵԶԵՐՈՎԱԿԱՆ ՍԻՐՈՒ ԵՐՈՒՅՆԵՐՈՒ՝ ՀԱՅՆՈՒԽ ՀԱՅՆԵ ԵՎ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱՎՅԱԿ

## Ն. Խ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

*Երիտասարդ տարիներին ինձ թվում էր,  
թե աշխարհում միայն մի բանաստեղծ կա, և դա Հայնենն է:*

Ավ. Իսահակյան

1893 թվականին տասնութամյա Ավ. Իսահակյանը մեկնում է Գերմանիա՝ ուսումը շարունակելու: Այդ ժամանակաշրջանում Գերմանիայում տիրող գրական մթնոլորտում ձևավորվեց բանաստեղծի գրական և գեղագիտական ճաշակը:

Գերմանական փիլիսոփայությունը սնուցում էր նրա միտքը, իսկ նրա բանաստեղծական հանճարն ուղղորդում էր գերմանական պոեզիան: Իսահակյանի համար հատկապես առանձնահատուկ դպրոց և չափանիշ է եղել Գաև Հ. Հայնեի պոեզիան, նրա ընդգրկումը և ոճը: Նրա «Երգերի գիրքը» հրաշալի օրինակ էր տալիս՝ ինչպիսին պետք է լինի բանաստեղծական երկը, և Իսահակյանը, որը միշտ էլ մեծ սեր է ունեցել դեպի ժողովրդական երգը, այժմ սահմանում էր իր համար երգ-բանաստեղծությունների մի ուրույն հասկացություն և «երգերը» հստակորեն տարբերում ուսանավորներից:

Գերմանիայից վերադառնալուց հետո բանաստեղծը Ալեքսանդրապոլից 1895 թ. սեպտեմբերի 17-ին «Մուրճի» խմբագրություն է ուղարկել հինգ թարգմանություն (Նիցցեից, Օլաֆից, Օերբարտից և Հայնեից)՝ կից հետևյալ նամակը, խնդրելով տպագրել դրանք ամսագրում՝:

*«Մեծարգո պ. Խմբագիր,*

*ուղարկում եմ «Մուրճին» տպագրելու հետևյալ հատվածները. սրանք իրենց ոգով ամենից թարմն են գրականության մեջ, այստեղ կա այժմյան սիմվոլիստների հետ միասին և՛ Նիցցեի առոգանությունը, և՛ Հայնեի թալկությունը - ներկայիս նուրբ կուլտուրայի մարդու սիրտը: Այս բոլորը նշանավոր կտորներ են. հանճարեղ Նիցցեի տողերն անմասն են, և մեր գրականության մեջ նույնիսկ դժբախտ Հենրիի անունն օտար: Հայնեն միշտ երևում էր մեր գրականության մեջ նուրբ, սալոնական-մանուշակի ու շաղերի բուրիչ, այժմ նա երևում է նեվրոզ էպիկուրիստ, հոգնած, զգված-բուրդիստ: Նրա այս զըխավոր կողմը միշտ մոռացվում է:*

...

*Հուսով եմ, որ կտպագրեք, խոստանում եմ ուղարկել ուրիշներ:*

*Մնամ հարգանքով  
Ավետիք Իսահակյանն՝:*

Սակայն «Մուրճի» խմբագրությունն անհայտ պատճառներով հարմար չի գտել հիշյալ թարգմանությունների տպագրումը, և սրանով էլ վճռվել է նրանց ճակատագիրը. մնացել են անտիպ:

Հետագայում նամակը և թարգմանությունները հանվել են «Մուրճի» արխիվից, և երբ ցույց են տվել Վարպետին, նա իր ձեռքով ինքնագրի վրա ավելացրել է. «Այս բոլորը թարգմանված են գերմաներենից 1895-ին, և այդ թվականի իմ գիրք է - Ավ. Իսահակյան»<sup>1</sup>:

<sup>1</sup> Տե՛ս «Հայրենիքի ձայն», 1965, թ. 4, էջ 14:

<sup>2</sup> ԳԱԹ, Իսահակյանի ֆ., 1, 121:

<sup>3</sup> Գ. Հովհանն, Ավետիք Իսահակյան, Երևան, 1976:

Տարիներ անց՝ 1930-ական թվերի վերջին, Իսահակյանը գրականագետ Գ. Հովհաննիսյանի հետ գրուցելիս վերհիշել է Հայնեից կատարած իր թարգմանությունների մասին և հայտնել իր կարծիքը. «Երիտասարդ տարիներին ինձ թվում էր, թե աշխարհում միայն մի բանաստեղծ կա և դա Հայնեն է: Հիշում եմ 19-20 տարեկան էի և որոշեցի թարգմանել Հայնե, նույնիսկ հանդգնեցի տպագրել, ուղարկեցի Թիֆլիս «Մուրճ» ամսագրին, բայց լավ է՝ չտպագրեցին: Հավանորեն անհաջող էին այդ թարգմանությունները»<sup>4</sup>:

Տարիների հետվից բանաստեղծը, վերագնահատելով իր կատարած առաջին թարգմանական փորձերը, գուցե և վերանայում է որոշ տեսակետներ:

Ավ. Իսահակյանի կատարած թարգմանությունները գեղարվեստական առումով չի կարելի կատարյալ համարել և իբրև առաջին փորձ՝ էապես զիջում են Իսահակյանի մյուս թարգմանություններին: Բայց գեղարվեստական արժեքից բացի, դրանք հետաքրքրություն են ներկայացնում գրականության և գրական կապերի պատմության տեսանկյունից, քանի որ հնարավորություն են տալիս քննել երիտասարդ Իսահակյանի գրական և գեղագիտական հակումները մեզ հետաքրքրող ժամանակահատվածում և Հայնեի բանաստեղծական աշխարհի հետ ունեցած փոխհարաբերության մեջ:

Իրականում Հայնե-Իսահակյան կապն ավելի խորն է, միմյանցից չափազանց տարբեր, սակայն այնքան հարազատ ու մոտ իրար: Որպես հոգեկան մերձեցման հող էր ծառայում մերժված սիրո ցավը, ռոմանտիկական հոգու թոխչը, մարդկանց երազներն ու տառապանքը, աշխարհի անկատարությունը: Ինչպես Հայնեի, այնպես էլ Իսահակյանի վաղ քնարերգության մեջ սերը եղել է պոեզիայի հիմնանվազը: Եթե Հայնեի սիրտը խոցված էր Ամալյայի անտարբերությունից և դավաճանական ամուսնությունից, ապա նույնպիսի զգացումը վիրավորում և մորմոքում էր 18-ամյա պոետի «ցաված սիրտը»: Հայնեի պարզ, սիրազեղ, մերժված սիրուց ծնված բանաստեղծությունները մեծ արձագանք էին գտնում արդեն իսկ սիրահարված և իր անզուգական սերը կորցրած Իսահակյանի հոգում:

«Միայն մի անկատար բաղձանք, որով կյանքում մատնեց նրան այն հուսահատ վշտին, որով այնպես սրտահույզ հմայում են մեզ նրա քերթվածները. քանզի Դեպիան, որին նա հետապնդում էր, պետք է խույս տար նրա գրկից, որպեսզի իր փոխարեն թողներ նրան անմահության դափնի»<sup>5</sup>,- այսպես է արտահայտվել Օուպենհայմերը Պետրարկայի մասին: Այս նույն երևույթն է ընկած նաև Հայնեի և, ավելի ուշ, Իսահակյանի սիրո քնարերգության հիմքում:

«Մեծ քնարերգու Հայնեի կարծիքով՝ սիրո մեջ, ինչպես հոռոմեական կաթոլիկ կրոնում, գոյություն ունի մի նախնական քավարան, որտեղ ընտելանում են տապակվելուն՝ մահացան հավիտենական դժոխքը ընկնելը: Հար ու նման են մեծ բանաստեղծների ճակատագրերը»<sup>6</sup>: Երկուսն էլ ապրել են զգացմունքների նույն ներքին փոթորիկները, մակընթացությունն ու տեղատվությունը, իսկ անդորրության պահին երկնել սիրո և հոգու ցավից ծնված բանաստեղծական գոհարներ:

Ավ. Իսահակյանի պոեզիան ուսումնասիրող գրականագետներից շատերն են նկատել, որ գոյություն ունի որոշակի ընդհանրություն նրանց քնարերգության միջև: Հատկապես ուշագրավ է այն հանգամանքը, որ Ավ. Իսահակյանի պոեզիայում նույնպես կան այն հիմնական մոտիվները, ինչը որ հատկանշական է Հայնեի պոեզիայի համար: Դա երազ-սիրո (Traummotiv) և ուրու-սիրո (Das Gespenstmotiv) մոտիվն է: Ավելին՝ գտնում են, որ կարելի էր Ավ. Իսահակյանին հայկական Հայնե անվանել, եթե նա նույնպես օժտված լիներ սարկազմի շնորհքով: Ահա թե ինչ է գրում այդ մասին գրականագետ Ա. Երեմյանը. «Առհասարակ անժխտելի է, որ քնարական բանաստեղծության ասպարեզում Իսահակյանն, իր ինքնատիպ արվեստով եզակի է: Այդ ժանրում մեր լավագույն պոետներից անգամ Հովհ. Թումանյանը, Դ. Վարուժանը, Մ. Պեշկոթաշյանը, Մ. Մեծարենցը չեն կարող մրցել Իսահակյանի լիրիկական պոեզիայի արվեստի հետ: Այդ տեսակետից դա գերմանացի պոետ Հ. Հայնեն է: Երկուսի լիրիզմի մոտիվներն էլ

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> A. Schopenhauer. Die Welt als Wille und Vorstellung. erster Band, Leipzig, 1873.

<sup>6</sup> Ա. Մուշեղյան, Ավ. Իսահակյան, վաղ տարիներ. 1875-1898, Երևան, 1983, էջ 147:

նույնն են: Երկուսի ապրումներն ու տրամադրություններն էլ այնքա՛ն հարազատ են և այնքա՛ն մոտ: Միայն մի գիծ Իսահակյանից բաժանում է Հայնեին, դա գերմանացի պոետի անճման սարկազմն է, որի շնորհիվ էլ նա փայլում է համաշխարհային գրական-նություն մեջ»<sup>7</sup>:

Այլ. Իսահակյանը Հ. Հայնեի նման օգտվում է ժողովրդական երգերից ամենա-լայն չափերով, և երկուսի սիրերգի հիմնական շերտերը գրեթե ոչնչով չեն զանազան-վում: Հաճախ թվում է, թե մեկը լրացնում է մյուսին:

Համեմատության համար ներկայացնենք Հայնեի բանաստեղծություններից մեկը:

Եվ այդպես ահա մոռացար իսպառ  
Որ ես քո սրտին տիրել եմ երկար,  
Սրտին քո քաղցրը, կեղծավոր այնքան,  
Որ կեղծ ու քաղցրը չըկա այլ մի բան:

Մոռացար սերն և տանջանքը բոլոր,  
Որոնք իմ սիրտն են ճնշել ամեն օր.  
Սե՛րն էր արդյոք մեծ, թե տանջանքը չար,  
Այդ երկուսն էլ մեծ էին հավասար<sup>8</sup>:

Հոգու սլացք, մտքի ընթացք, Հայնեի պարզ և անպաճույճ ոճի նմանությունները շատ անգամ ենք հանդիպում Իսահակյանի բանաստեղծություններում, երբեմն այնքան հաճախ, որ կարելի չէ տարբերել հեղինակին, օր.<sup>9</sup>

Դու մերժեցիր ինձ, չը կանչեցիր ետ:  
Եվ անցան տխուր, տարիներ տխուր.  
Եվ հեռվից վախով, հույսերից թափուր,  
Նայում էի քեզ, մեճակ վշտիս հետ:

Օրերս շքեղ չքացան անհետ,  
Բայց մի վայրկյանը քո կախարդ գրկում,  
Մի վայրկյանը սուսկ՝ խրթին ու անհուն  
Ժամանակս անցած՝ կդարձնե ինձ ետ<sup>10</sup>:

Այս ոճը կարող է շփոթության մեջ գցել ընթերցողին, եթե հաստատ չիմանա, որ այս փոքրիկ բանաստեղծությունը «Երգերի գրքից» չէ, այլ Իսահակյանի վաղ տարիներին բանաստեղծություններից:

Հայնեի պոեզիայի ազդեցության հարցի լուսաբանման տեսանկյունից կարևոր նշանակություն ունեն 1890-ական թվականների բանաստեղծությունները: Այդ շրջանը ներառում է նաև բանաստեղծի՝ Լայպցիգի համալսարանում ուսանելու տարիները: Ինչպես հայտնի է, մինչև Լայպցիգ ժամանելն Իսահակյանն իր հետ արդեն ուներ մի քանի գողտրիկ բանաստեղծություններ, որոնք գրել էր ճանապարհին: Նոր և անծանոթ միջավայրում թարմ գաղափարների, տպավորությունների տակ ծնվում են մի շարք նոր բանաստեղծություններ, որոնք միասին վերացած կազմեցին նրա արտասահմանյան երկու տարվա կյանքի քնարական տարեգրությունը:

1899 թվականի «Մուրճ» հանդեսի առաջին համարում Այվ. Իսահակյանի տպագրված «Յնորքներ և մորմոռներ» բանաստեղծությունների շարքը (թվով 15 հատ), որ նվիրել է իր ընկեր Դերենիկ Դեմիրճյանին, ունի երկրորդ վերնագիր՝ «Լիրիկական ինտերմեցցո»<sup>11</sup>: Հ. Հայնեի «Երգերի գրքի» հատորի ցիկլի օրինակով:

Եթե ուշադրությամբ քննենք նրա առաջին շրջանի ստեղծագործությունները, կտեսնենք, որ դրանք իրենց տրամադրություններում, գույներում և պատկերներում, անգամ այլոժետային կառուցվածքներում կրում են Հայնեի պոեզիայի ուղղակի կնիքը: Ա-

<sup>7</sup> Ա. Երեսյան, Ակադեմիկոս Այվ. Իսահակյանի պոեզիայի հիմնական գծերը, Նոր Զուռա, 1946:

<sup>8</sup> Հ. Հայնե, Երկեր, Երևան, 1958, էջ 111:

<sup>9</sup> Այվ. Իսահակյան, Երկեր, Երևան, 1987, էջ 127:

վելի ուշ՝ 1908 թ. Մինաս Բերբերյանը «Արարատ» ամսագրում, անդրադառնալով Հայ-նե-Իսահակյան առընչություններին, գրում է. «...Հայնեի թարգմանը հանդիսանալու համար, հարկավոր է նախ և առաջ նույն տրամադրությամբ ներշնչուել: Այդպիսի տրամադրութիւն ի վաղուց հետէ ցույց է տալիս մեր տաղանդաւոր բանաստեղծ Աւետիս Իսահակյանը, որ նորերս կրկին հրատարակեց իր «Երգերն ու վերքերը»-ը: Նա ոչ միայն տրամադրված է ա'la Հայնէ, այլ և որոշ շրջանում գտնուած է եղել նրա ազդեցութեան տակ, վերցնելով նրանցից և ոտանավորների ձևերը և նրա սիրած բառերը: Ծատ անգամ Ա. Իսահակյանը վերցնում է Հայնէից իրան դուր եկած ոտանատրի ատաջին տու-նը, ատաջին նախադասութիւնը, և յետոյ զարգացնում է իր ձևով ու տալիս նրան նոր բովանդակութիւն («Սիրտ իմ, սպասիր», «Էս օր ձեր տուն», «Ծառաչելով մի վառ աստղիկ», «Մութ անտառով լուռ ման կուգամ»)<sup>16</sup>:

Անժխտելի փաստ է, որ Իսահակյանի պոեզիան տիպաբանական ընդհանրություններ ունի Հայնեի պոեզիայի հետ: Սակայն Իսահակյանն ենթարկվել չգիտի, այդ ազդեցությունը եղել է օրգանական, սնուցիչ: Իսահակյանն ստացել է հոգեկան, զգայա-կան, իմացական լիցքեր Հայնեի պոեզիայից, մնացածն իրենն է:

Նմանությամբ հանդերձ, Իսահակյանն ինքնատիպ է իր արտահայտչամիջոցնե-րով: Նա ստեղծագործում է բուն ժողովրդական լեզվով, ձևով և ոգով, ավելի շատ նրա լեզվամտածողությունը բուն շիրակյան է, մի բան, որն իր մեջը չունի մեր գրականու-թյան մեջ: Եվ ի տարբերություն Հայնեի, հայ բանաստեղծի մոտ բոլորովին բացակայում է կծու հեզոությունը, ծաղրը, ամենատեղից պահին կծու ճշմարտություն ասելու պա-հանջը:

Հայնեն գրում է.

**Թույն է կաթուն իմ երգերից...**

Մինչդեռ Իսահակյանը՝

**Ախ, երգերս, իմ վերքերս...**

**Մընաք, սընաք սրտիս արնով...**

Կարելի է բազմաթիվ գուգահեռներ անցկացնել Հայնե-Իսահակյան բանաստեղ-ծական աշխարհի միջև. ոոմանտիկական աշխարհընկալում, Ամալյա և Օուշանիկ, տա-րագրություն, կարոտ, մայր, երագ, հայրենիք - անհ այն առանցքը, որի վրա հյուսվել է նրանց պոեզիան: Այստեղից էլ նույն հնչեղությունը, նույն ուրիշն ու ոճը, և դա ամենևին էլ չի նսեմացրել Իսահակյանի պոեզիան, ընդհակառակը, «կրթել» է, հղկել՝ հասցնելով բանաստեղծական կատարելության:

Այնուամենայնիվ թե՛ Հ. Հայնեն և թե՛ Ավ. Իսահակյանը վիրթուարի անհատակա-նություններ են և մեծ են յուրովի: Սակայն նրանց երկուսի գերզայուն հոգիների աշ-խարհընկալման առանցքը նույնն է եղել: Նրանցից յուրաքանչյուրը գրեթե նույն կերպ է արտահայտել մարդկության տիեզերական սիրտ և վշտի իր ընկալումը:

**Н. Х. МАРКАРЯН — Г. Гейне и Ав. Исаакян — певцы Вселенской любви.**— Ав. Исаакян познакомился с произведениями Г. Гейне еще в юности — в годы учебы в Эчмиадзинской академии Геворкян. В 1899 году 18-летний Исаакян уезжает в Германию для продолжения учебы. В литературно-культурной атмосфере тог-дашней Германии формируются литературные и художественные взгляды и пристрастия поэта. Ближе всех был Исаакяну Гейне. Между поэтическими мирами Гейне и Исаакяна прослеживаются многочисленные параллели. Это и романтическое мировосприятие, и общие для них мотивы тоски, скитальчества, любви, мечтаний, родины. Великие поэты Исаакян и Гейне совпадают и в своем восприятии вселенской скорби и любви.

<sup>16</sup> Մ. Բերբերյան, Տխուր մեղեդիներ, «Արարատ», Ա. Էջմիածին, 1908, թ. Բ, էջ 159: